ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER KULTURVEREIN IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն*

Շրջաբերական 2017 / #3

Ֆրանկֆուրտ, 17.05.2017

**Սիրելի՛ միութենականներ և հայրենակիցներ,**

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2017թ. մայիսի 28-ին,
սկիզբը՝ ժամը **14:30**-ին
մուտքը՝ ժամը 14:00-ին




**<u>ՄԱՅԻՍ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՄԻՍ</u>**

Հեսսէնի Հայ Մշակութային Միության, Աշաֆենբուրգի Հայ Համայնքի և Մանհայմի Հայ Մշակութային Արարատ Միության միասնական ծրագիր: Միությունների անդամները և դպրոցի սաները հանդես կգան իրենց պատրաստած ծրագրով՝ ասմունքով, ազգային երգ ու պարով:

**Հասցեն՝** St. Thomasgemeinde, Heddernheimer Kirchstr. 5, 60439 Frankfurt am Main

2017թ. հունիսի 10-ին՝
շաբաթ, ժամը՝ 17:00-ին



**<u>ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋ՝ ԶԵԿՈՒՅՑ՝ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ</u>**

Զեկույց Շահան Նաթալիի՝ փիլիսոփա և հասարակական գործիչի մասին: Զեկույցից հետո՝ քննարկում: Հեղինակ և վարող՝ Արեգ Սաֆարյան:

**Հասցեն՝** Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2017թ. հունիսի 15-ին՝
հնգշ., ժամը՝ 15:00-ին



**<u>ԷՔՍԿՈՒՐՍԻԱ</u>**

ՀՀՄՄ-ը շաբաթօրյա դպրոցի աշակերտների հետ նախաձեռնում է էքսկուրսիա դեպի Նիդդա այգում գտնվող Մինի Գոլֆի հրապարակ: Մինի գոլֆից հետո միասին կխաղանք ֆուտբոլ: Նաեւ խորովածի հնարավորություն կա: Խնդրում ենք յուրաքանչյուրին բերել իր հետ ուտելիք եւ խմիչք:

**Հասցեն՝** Niddapark, Hadrianstraße 50, 60439 Frankfurt am Main

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Anahit Muradyan

Schriftführerin: Shushan Tumanyan
Schatzmeisterin: Evet Dujak
Tel.: 0163- 60 44 166
Beisitzerin: Knarik Petrosian

Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822

Vorstand ist auch per E-Mail erreichbar: **info@armenier-frankfurt.de** **www.armenia.de**

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2017 / #3 Ֆրանկֆուրտ, 17.05.2017

2017թ. հունիսի 24-ին՝
շաբաթ, ժամը 16-ին:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Սիրելի հայրենակիցներ, այդ օրը Ձեզ հետ միասին կպատրաստենք համեղ և հետաքրքիր հայկական ուտեստներ: Ուրախ կլինենք Ձեր ակտիվ մասնակցության համար:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետեւեք մեր ինտերնետային կայքին՝ **www.armenia.de**)

Միության հանդիպման վայրը բաց է ամեն շաբաթ օր՝ 15:30-ից մինչեւ 19:00:
Միության հայկական **շաբաթօրյա դպրոցի դասընթացները** շարունակվում են ժամը 15:30 - 18:00: Լրացուցիչ տեղի են ունենում նաև **ազգային պարի** դասընթացներ:

**Հեսսենի ամառային արձակուրդի ժամանակ միության հանդիպման վայրը փակ կլինի:**
Վերջին հանդիպումը նախքան արձակուրդը՝ շաբաթ, հուլիսի 1-ին:
Առաջին հանդիպումը արձակուրդից հետո՝ շաբաթ, օգոստոսի 19-ին:

**Միության հասցեն**՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt am Main:

**--------- տեղեկություններ --------- տեղեկություններ --------- տեղեկություններ ---------**

**ՀՀՄՄ սուրբ պատարագները** – Այս դրությամբ ՀՀՄՄ հարմար եկեղեցի է փնտրում: Այս տարվա համար դեռ ծրագրվում են մի քանի պատարագներ: Նորության դեպքում մենք Ձեզ տեղյակ կպահենք:

******

**2017 թ. հունիսի 11-ին, կիրակի, ժամը՝ 14:00 – Հէսսենի Հայ Մշակութային Միության տարեկան ժողով:** ՀՀՄՄ անդամներին կուղարկվի ևս մեկ նամակ-հրավերք, որտեղ նշված կլինեն օրվա քննարկման գլխավոր կետերը:

******

**2017թ. հունիսի 3-ին, շաբաթ – «Տերսիմ Եվրոպա փառատոն 2017»:**
Մեր միության և Աշաֆենբուրգի Հայ Համայնքի պարախումբը սիրով կմասնակցի այդ մշակութային ծրագրին: Մենք Ձեզ ելույթի հստակ ժամանակի համար ավելի ուշ կտեղեկացնենք համացանցում և էլեկտրոնային նամակի միջոցով: Հասցեն՝ Rebstockpark, Am Römerhof 5, 69486 Frankfurt: